ԱՊՊԱ պայմանագրի առցանց էլեկտրոնային եղանակով կնքումը հնարավոր է ստորև տարբերակներով.

- ինտերնետային կայքեր (aswa.am, appa.am, ապահովագրական ընկերությունների պաշտոնական կայքեր)
- վճարային համակարգեր,
- տերմինալներ,
- բջջային հավելվածներ:

ԱՊՊԱ պայմանագրի առցանց էլեկտրոնային եղանակով կնքման քայլերը.

1. Առաջին էջում թողնել որպես լռելյայն տարբերակ ընտրված ընտրել «Գրանցված է ՀՀ-ում» և «Հաշվառված է Ճանապարհային ոստիկանությունում» տարբերակները:
2. Մուտքագրել ստորև տվյալները և սեղմել «Հաստատել» կոճակը, որից հետո անցում կկատարվի երկրորդ էջին, որտեղ կարտացոլվեն ավտոմեքենայի սեփականատիրոջ վերաբերյալ տվյալները.

- ավտոմեքենայի հաշվառման համարանիշ,
- ավտոմեքենայի սեփականատիրոջ անձը հաստատող փաստաթղթի համար:

3. Մուտքագրել ստորև տվյալները և սեղմել «Պահպանել և անցնել պայմանագրի էջին» կոճակը.

- ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցե,
- ապահովադրի հեռախոսահամար,
- ապահովադրի հաշվեհամար՝ ընտրելով համապատասխան բանկը (ցանկության դեպքում)
- ՏՄ շահագործման նպատակ:

4. Ընտրել պայմանագրի ժամկետը և սեղմել «Պահպանել և անցնել վճարման էջ» կոճակը:
5. Ընտրել համապատասխան ապահովագրական ընկերությունը և սեղմել «Պահպանել և անցնել վկայագրի էջ» կոճակը:
6. Վճարման տվյալներին ծանոթանալուց հետո սեղմել «Վճարել և հաստատել» կոճակը:
7. Լրացնել բանկային քարտի տվյալները և սեղմել «Վճարել» կոճակը (եթե պայմանագիրը կնքվում է կանխիկի ընդունման վճարային տերմինալներով, ապա մուտքագրեք համապատասխան կանխիկ գումարը):

Պայմանագրի հաստատման էջում կարտացոլվի «Պայմանագիրը վճարված և հաստատված է» հաղորդագրությունը, և ստեղծված ԱՊՊԱ պայմանագիրը ինքնաշխատ կերպով կուղարկվի պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

Նշված քայլերին կարող եք տեսողական ծանոթանալ՝ անցնելով հետևյալ հղմամբ՝ https://www.youtube.com/watch?v=rmGWgoGKKbM :

Հարգանքով՝

Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո